2. Հետազոտականորեն շարունակել նոր նյութերի հայտնաբերման և ձեռքբերման ուղղությամբ տարվող աշխատանքները։ Հասկանալի է, որ խոսքը չի վերաբերում պետական հիմնարկություններին, որոնք սահմանված ժամանակը լրանալուց հետո իրենց նյութերը հանձնում են պետական պահպանության։ Խոսքը վերաբերում է մեր երկրի և օտար երկրների պետական ու ազգային արխիվներում եղած հայ ժողովրդի պատմության հետ առնչվող նյութերի իսկականները կամ պատճենները ձեռք բերելուն, մի հարց, որ բավականին դժվարին է և մեծ շանքեր է պահանջում։ Նույնը կարելի է ասել նաև մեր երկրում և Սփյուռքում առանձին անհատ մարդկանց մոտ եղած արխիվային նյութերի ձեռքբերման մասին։ Եթե այդ շարվի այժմ, հետագայում ավելի դժվար կլինի կամ անհնարին։ Փորձը ցույց է տալիս, որ փոխադարձ ըմբռնման պայմաններում և հայրենասիրական զգացումներից ելնելով այս բնագավառում կարելի է հասնել որոշակի հաջողություններ։

Պետք է հոգալ, որպեսզի արխիվային ֆոնդերը ավելի լայն մասշտաբներով գիտական շրջանառության մեջ դրվեն և օգտագործվեն ի շահ ժողովրդի տնտեսության, գիտության և կուլտուրայի և ամենից առաջ՝ պատմական գիտության զարգացման։

Արխիվների, որպես պատմության գրավոր հուշարձանների, պահպանումը սահմանված է օրենսդրական ակտերով, բայց նրանց պահպանումը որպես քաղաքացիական բարոյական սուրբ պարտականություն պայմանավորված է նաև իր ժողովրդի անցյալի ու ներկայի նկատմամբ ամեն մի անհատի գիտակցությամբ ու ներքին մղումով։

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԾ ՄԱԶՐԱ ԳՅՈՒՂԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Հայտնի է, որ վիմական արձանագրությունները կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության և մշակույթի ուսումնասիրության համար։ Նրանք հնարավորություն են ընձեռում պարզաբանելու, ճշտելու, լրացնելու ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքին, քաղաքական անցուդարձերին, կրոնա-եկեղեցական հարաբերություններին վերաբերող խնդիրները, ուսումնասիրելու առանձին հուշարձանների, ինչպես նաև թագավորական կամ իշխանական տների, մելիքական տոհմերի, բնակավայրերի ու տեղանքի պատմության կնճռոտ հարցերը։ Նրանք արժեքավոր նյութ են բովանդակում մակրո- և միկրոտեղանունների, ժողովրդի նիստուկացի, սովորույթների, բնակչության շրջանում տարածված անձնանունների համակարգի և հայոց լեզվի առանձին բարբառների հետազոտման համար[1]։

Արդեն հրատարակվել է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 6 պրակ, ուր տեղ են գտել պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհի Գեղարքունիք, Սողք, Վայոց ձոր գավառների, Զանգեզուրի, Աղստևի հովտի, Ղարաբաղի և Անի քաղաքի շուրջ 4441 արձանագրություն։ «Դիվանի» հրատարակման գործում հատկապես մեծ է վիմագրագետ Ս. Գ. Բարխուդարյանի երախտիքը։ Որքան էլ բարեխղճորեն ու մանրակրկիտ կատարված լինեն վիմագրական նյութերի հավաքման ու հրատարակության աշխատանքները, որպիսիք են «Դիվանի» հատորները, այնուամենայնիվ, բնականաբար, ենթադրելի է, որ կարող են լինել անտես մնացած արձանագրություններ, աչքից վրիպած կամ ճշտման կարիք ունեցող ընթերցումներ։

Ստորև ներկայացնում ենք Վարդենիսի շրջանի Մեծ Մազրա բնակավայրի չհրատարակված կամ որոշ բացթողումներ ունեցող արձանագրությունները, տալով նաև պատմական տեղեկություններ գյուղի մասին։

Մեծ Մազրա գյուղը գտնվում է Վարդենիս քաղաքատիպ ավանից 4 կմ հյուսիս-արևելք, Մասրիկ (Մազրա) գետի հովտում, Վարդենիս—Կրասնոսելսկ ավտոխճուղու վրա։ Գյուղի հին

1 Հայերեն վիմական արձանագրությունների գիտական նշանակության մասին մանրամասն տե՛ս Դիվան հայ վիմագրության. պր. I, Երևան, 1966, էջ V—XIV։ Վիմագրերն ունեն նաև հուշարձանի համար դեկորատիվ-հարդարողական նշանակություն (տե՛ս Հ. Գ. Խալիփայան. Արձանագրությունները հայկական ճարտարապետական ստեղծագործության կոմպոզիցիայում.— «Էջմիածին», 1959, Բ, էջ 52—61, Գ, էջ 45—52, Դ, էջ 44—49)։

2 Տեղանունն իր հիմքում ունի մազրայ «արտոբայք, շրջակայ մշակելի հողեր» բառը, որ Հր. Աճառյանը համարում է «հնագույն ժամանակի բառ» և նույնացնում արաբ. mazra'a «արտ, հանդ» բառի հետ (տե՛ս նրա Հայերեն արմատական բառարան. հ. III, Երևան, 1977, էջ 223)։

անունը հայտնի չէ, բայց IX—X դդ. խաչքարերի հայդ թվում նաև Սյունյաց Գրիգոր իշխանի կողմից 881 թ. կանգնեցված, ըստ արձանագրության՝ ս. Նշան3, իսկ տեղացիների կողմից «Մուրադ խաչ» անվանված խաչքարերի) առկայությունը փաստում են նրա՝ հին բնակավայր լինելը։ Մազրան հիշատակվում է Տաթևի վանքի Գրիգոր լուսավորիչ եկեղեցու 1532 թ. նվիրատ-



վական վիմագրում, որի համաձայն Դեղարքունիքի մի քանի իշխանների հետ Մազրայի իշխանները ևս պարտավորվում էին տարին երկու կապալ (=16 կգ) ձեթ հատկացնել վանքին4։ Ոմն Պողոս Մազրեցի է հիշատակվում նույն վանքի Պողոս Պետրոս եկեղեցու արևելյան պատին արտաքուստ փորագրված եռատող արձանագրության մեջ (թվագրվում է XIV դարով)5։

Մազրան նշանավոր բնակավայրի վերածվեց հատկապես XVI—XVIII դդ., երբ նրա տերերը դարձան Վերին Խաչենի Դուքյան իշխանական տոհմից XVI դարում սերված և հայոց պատմության մեջ այքի ընկնող դեր խաղացած Մելիք-Շահնազարյանները (նրանց մի ճյուղն էլ 1603 թ. իշխում էր Վարանդայում և «Խամսայի» մելիքություններից մեկն էր)6։ Տոհմն այնպիսի համբավ ձեռք բերեց, որ նրա մելիքները հայտնի էին անգամ պարսից շահերին։ 1606 թ. Շահ

Արաբերենից փոխառություն է, անշուշտ, թուրք. mezra։ mezraa «արտ, անդաստան, վարելահող, մշակված դաշտ» բառը (տե՛ս Турецко-русский словарь. М., 1977, с. 626)։ Մազրա// Մեզրէ-ներ կան նաև Հայաստանի այլ վայրերում՝ Վարդենիսի շրջանում (Փոքր Մազրա), Սիսիանի շրջանում (այժմ՝ Բարձրավան), Ղափանի շրջանում (Երքեմնի գյուղ) (տե՛ս Ա. Ա. Ասլանյան, Հ. Ղ. Գրգեարյան. Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան. Երևան, 1981, էջ 127)։ Մազրա Քարիմխան է անվանվել այժմյան Այլայազ (հրենում՝ Եղեգիս) գյուղը Եղեգնաձորի շրջանում (տե՛ս նույն տեղում, էջ 12, 127)։ Մեզրէ-ն հայկական գյուղ էր Այլաշկերտի մոտակայքում, որի բնակիչներն այստեղ էին գաղթել 1877—1878 թթ., Վանա լճի կողմերից (տե՛ս Ս. Հայկունի. Բագրեվանդ շրջաշրջ գավառ. մասն Ա, Վաղարշապատ, 1894, էջ 271)։ Նրանց հետնորդները առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղափոխվել են Կոտայք և բնակություն հաստատել այժմյան Արովյանի շրջանի Զովաշեն գյուղում։

3 Դիվան հայ վիմագրության, պր. IV, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1973 (այսուհետև՝ ԴՀՎ, IV), էջ 334։

4 ԴՀՎ, II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1960, էջ 27։ Հմմտ. Ս. Ա. Ավագյան. Վիմական արձանագրությունների բառաքննություն. Երևան, 1978, էջ 136—139։

5 ԴՀՎ, II, էջ 17։

6 Մանրամասն տե՛ս Լեո. Հայոց պատմություն. հ. III, գ. II («Երկերի ժողովածու», հ. III, Երևան, 1973, էջ 14, 16—20, 224—225, 260 և հտ.)։ Կարապետ եպիսկոպոս. Դուքյանք և Մելիք-Շահնազարյանք («Նյութեր հայ մելիքության մասին», պր. Բ), էջմիածին, 1914, էջ 102—104։

Մրասը ոչ միայն հյուրընկալվել է Մադրայում, այլև հատուկ հրովարտակով արտոնություններ շնորհել Մելիք-Շահնազարին[7]։

Գյուղում պահպանված հուշարձանները կենտրոնացված են Մելիք-Շահնազարյանների տոհմական, հին և ժամանակակից գերեզմանոցներում և ավերակ եկեղեցու մոտ։ Որոշ հուշարձաններ, որոնք ժամանակին Ս. Գ. Բարխուդարյանը տեսել է գյուղամիջում ցրված, 1981—82 թթ. Հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության գիտաարտադրական արվեստանոցի աշխատակիցների կողմից տեղափոխվել են Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանոց։

Ա) Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանոց

Տարածված է գյուղամիջում, գյուղսովետի շենքի մոտ։ Տեղում հանդիպում են XVI—XVII դդ. բարձրարվեստ խաչքարեր և տապանաքարեր։

1. Տապանաքար, օրորոցաձև։ Հյուսիսային կողին, խորաններում քանդակված է երեք խաչ, հարավային կողին՝ կենցաղային տեսարան։ Եղծված արձանագրությունը փորագրված է նույն կողմերում. «[ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ../..]ՃԱՆԻՆ, ՈՐԴԻ ՄԷԼՔ/ՈՒՄԻՆ։/ ԹՎ. ՈՃ/ԼԱ» (1682) (գծ. 1)։

2. Տապանաքար, օրորոցաձև։ Հարավային կողին՝ երեք խաչ խորաններում, շրջապատված խիստ հողմնահարված արձանագրությամբ, որի հետքերն են երևում միայն։ Հյուսիսային կողին՝ խնձույթի տեսարան և տարեթիվը. «ԹՎ ՌՃԼԴ (1685)» (գծ. 2)։

3. Խաչքար, գեղաքանդակ, ընկած է գետնին։ Խիստ հողմնահարված է, վերին մասը՝ կոտրված։ Հորինվածքային և մշակման տեխնիկայի

7 Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցւոյ. Վաղարշապատ, 1896, էջ 96—97։ Շահի այցելության մասին է վկայում նաև 1606 թ. ավետարանի հիշատակարանը (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար. հ. Ա, կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան. Երևան, 1974, էջ 217—219)։ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության IV հատորում (Երևան, 1972, էջ 102) սխալմամբ նշված է 1607 թ.։ Շահ Աբասի հրովարտակը տե՛ս Լ ե ռ. նշվ. աշխ., էջ 20—21։

8 Մադրայի նորօրյա պատմությունը տե՛ս Մ. Ս մ ր ա ւ ա ն ց. Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի. Վաղարշապատ, 1895, էջ 606։ Ե. Լ ա լ ա յ ա ն. Նոր-Բայազետի գավառ.—«Ազգագրական Հանդես», գ. 19, Թիֆլիս, 1910, էջ 23։ Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 71։

ընդհանրությունները հաջորդ խաչքարերի հետ հնարավորություն են տալիս վերծանել տարեթիվը՝ «[ԹՎ Ռ]ԻԶ (1577)» (գծ. 3)։

4. Խաչքարի երեկոր։ Կանգնեցված է պատվանդանին 1698 թ. խաչքարի (տե՛ս ստորև, № 20) մոտ։ Հողմնահարված է։ Վարդակից ցցած, ռուսազարդերի մեջ առկա է միայն տարեթիվը՝ «ԹՎ ՌԻ (1571)» (գծ. 4)։

5. Տապանաքար, բարձր, օրորոցաձև, հարավային կողին՝ որսի տեսարան, հյուսիսային կողին՝ երկու խաչ խորաններում, շուրջը երեք տող քիչ հողմնահարված արձանագրություն. «ԵՍ ՄԻ[Ր]ԽԱԹ/ՈՒՆ[Ս] Կ[Ա]ՆԿ[ՆԵՑԻ] ԽԱՉՍ ՈՒՐԴԻ [Ի]Մ / ՊԱՊ[Ա]ՃԱՆԻՆ»։ Թվագրվում է XVI—XVII դդ. (գծ. 5)։

Բ) Հին գերեզմանոց

Գտնվում է գյուղամիջում, բնակելի տների հարևանությամբ։

6. Խաչքար, խիստ հողմնահարված է, թիկունքի արձանագրությունը (8 տող)՝ վնասված. «Ա(ՍՏՈՒՇՈ)Վ ՄԵՔ Գ (3) / ԵՂԲԱՐՔՍ / ..., [ՊԱՒ]ՂՈՍ, ՎԷԼԻ/ՃԱՆ ԿԱՆԿՆԵՑԱՔ Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉՍ] ԱՐ/Ե[ՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՒՐ]Ն ԻՄ ԱՆ/ԻՒ [ԵՒ Հ]ԱՒՐՆ ԻՄ ՇԱ/ՀՈՒՄԻՆ / ԹՎ ՌՃԷ (1568)» (գծ. 6, նկ. 1)։

7. Տապանաքար, օրորոցաձև։ Հյուսիսային կողին՝ վարուցանքի տեսարան։ Հարավային կողին, խորաններում՝ երեք խաչ և եռատող արձանագրություն։ Արևելյան կողին՝ պարզ խաչ և տարեթիվը։ Ընթերցումը թեական է. «...ՀԱՍԱՆՍ ԱՐ[Ա]ՐԻ [.../ՅԻ]Շ(Ա)Տ(Ա)ԿՆ ԽԱՉ ... ՄԷԼԻՔՋԱՆ[ԻՆ]։ .../ԹՎ ՌՁԷ ԷՐ (1638)»[9] (գծ. 7)։

8. Տապանաքար, ուղղանկյունաձև, բարձրիկ։ Հյուսիսային կողին՝ երեք խաչ, հարավային կողին՝ հյուսկեն զարդամոտիվներ և արձանագրություն. «ԹՎԱԿԱՆ ՀԱՅ/ՈՑ ՌԼ (1581)։ ՅԱՅՍ է ՀԱՆԳ[ԻՍ]Տ ԹԱՀԻՐԻ։ ԵՂԲ[Ա]ՐՔ, ԱՆՄԵՂԱԴԻՐ ԼԻՐՈՒ/Ք ՎԱՐՊԵՏՆ ՍՈՐԱ / ՄՈՄԿ/ԱՅ։ / ԺԱՄ/ ԱՆԱԿ ՁԷՐ։ / ԿԱԷ(?)»։ Վիմագրից հայտնի է դառնում XVI դարի նոր քարգործ վարպետի՝ Մոմիկի անունը, որն այլուր վկայված չէ (գծ. 8)։

9. Խաչքար, կանգնեցված է ցածր պատվանդանին։ Թիկունքին ունի հողմնահարված արձանագրություն (ընթերցվում է մասամբ). «...Ն/ ...ԱՆՍ ԿԱՆ/[ԳՆԵՑԻ ՁԽ]ԱՉՍ Ի Փ/[ԲԿՈՒ]- ՌԻ[ՒՆ] ՀՈԳՈՑ ՀԱ/[ԻՐ]Ն ԻՄՈՑ ԱՇԱ / ..ԱՆԻՆ ԵՒ ՄԱՒ/ՐՆ ԻՄՈՑ ԹՈՒԲ/...Ն. ... ԵՒ ԱՐ[Ն]ՈՑ ՍԵՐ ԱՌ / ... / ...ԿԻՆ» (գծ. 9)։

9 Տապանաքարի արևելյան կողի լուսանկարը չլինելու պատճառով արձանագրության տարեթվի գրչանկարը չենք ներկայացնում։

10. Տապանաքար, օրորոցաձև, կոտրված։ Հարավային կողին երևում են երբեմնի արձանագրությունից առանձին տառեր։ Հյուսիսային կողին՝ կենցաղային տեսարան և տարեթիվ. «ԹՎ ՌՃԼԴ (1685)» (գծ. 10)։

11. Տապանաքար, ուղղանկյունաձև։ Հյուսիսային կողին՝ կենցաղային քանդակներ, հարավային կողին՝ խիստ հողմնահարված երեք խաչ։ Հորիզոնական նիստին փորագրված է մեկ տող արձանագրություն. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳՍԻՆ»։ Թվագրվում է XVI—XVII դդ. (գծ. 11)։

12. Խաչքար. կանգնեցված է գետնի հավասար պատվանդանին։ Քիվին և եզրագոտու վրա փորագրված է երեք տող արձանագրություն։ Ուշագրավ է, որ աջ եզրագոտուց սկսած գոերի ուղղությունը (ձախից աջ) խախտվում է։ ԿԱՆԿ-

Նկ. 1

[Ն]ԵՑԱՑ ՋԽԱՉՍ բառերը գրված են աջից ձախ, շրջագիր, ՀՈԳՈՑ բառը՝ ճիշտ ձևով, իսկ ձախ եզրագոտու գրերն անընթեռնելի են. «ԵՍ ԹՈՂԷՍ ԿԱՆ/Կ[Ն]ԵՑԱՑ ՋԽԱՉՍ ՀՈԳՈՑ /.../..ՐՋԻՆ ՆԻ....» (գծ. 12)։

13. Տապանաքար, օրորոցաձև։ Արևելյան կողին պարզ խաչապատկեր։ Հյուսիսային կողին՝ կենցաղային տեսարան։ Հարավային կողին՝ խորաններում ներփակված երկու խաչ և արձանագրություն. «ԵՍ ՂՈՒԼԻՍ ԿԱՆ/[ԿՆ]ԵՑԻ ԽԱՉՍ ՈՐԴԻ [Ի]Մ ՈՎԱՆԷՍԻՆ, ԹՎ Ռ (1551)», ՈՐՆ / ԱՀԹ / ԷՏ / ԱՋ ԻՐԵ/Կ /ՏԱՋՐԱՋԻ(?), ՈՐ ՃՈՂԵՑ ՄԻԵՈՅ/Ն....ՏԻՔ(?)» (գծ. 13, նկ. 2)։

14. Խաչքար, կանգնեցված ցածր պատվանդանի։ Վերնամասի բացակայության պատճառով քարի ստորին մասում պահպանվել է միայն արձանագրության շարունակությունը (մեկ տող). «[...] ԻՆՁ ԵԻ ԱՄՈՒՍԻՆ ՄԵՐ ՂԻՍԱԲ[Ե]ԹԻՆ» (իմա՝ Եղիսաբեթին)։ Խաչքարը (նաև արձանագրությունը) համարում ենք XVI—XVII դդ. գործ (գծ. 14)։

15. Տապանաքար, խաչապատկերներով և կենցաղային քանդակներով։ Արձանագրությունն սկսվում է հյուսիսային կողին, շարունակվում հարավային և արևմտյան կողերին. «Ս(ՈՒՐ)Թ ԽԱՉՍ Բ/ԱՐԷԽԱԻՍ ՊԱՊԻՆ, ՄԷԼԻՔՊ(Է)Կ/ԻՆ, ՈՐԴԻ / ԱՏԻՃԱՆ/ԻՆ» ԹՎ ՌՃԼԹ (1683)» (գծ 15)։

16. Խաչքար, բարձրարվեստ մշակմամբ։ Ընկած է ավերակ եկեղեցուց հարավ. Մասրիկ (և՝ ազրա) գետի ափին, կամրջից մոտ 70 մ հե-

ում։ Քիվն ունի երկտող արձանագրություն. «ԹՎ Ռ (1331) ԵՍ ԲԱԼԻՍ ԿԱՆԿՆԵՑԻ Խ(Ա)ՉՍ[Ի] ԵՎ ԲԱՐԻՐ ԻՄ ԷՏԿԱՐԻՆ» (գծ. 16)։

Դ) Ժամանակակից գերեզմանոց

Գտնվում է գյուղի արևելյան կողմում, Մասրիկ գետի աջ ափին։ Վերջին տարիներին բնակիչները գյուղի մյուս մասերից այստեղ են տեղափոխել 7 խաչքար և օգտագործել որպես տապանաքար (կան նաև խաչքարերի բեկորներ)։ Արձանագրվաց են երեքը։

Նկ. 2

17. Խաչքար, խիստ մամռապատ է և հողմնահարված։ Քիվին փորագրված է մեկ տող արձանագրություն. «Ս(ՈՒՐ)Ք ԽԱՉ[Ս] ԲԱՐ[ԷԽԱԻՍ] ՍԱՐԳՍԻՆ։ ԹՎ ՌԽԹ (1600)» (գծ. 17)։

18. Խաչքար։ Գտնվում է նախորդից մոտ 10 մ հեռու, երկաթե ցանկապատի մեջ։ Քիվին և ստորին մասում փորագրված է երկտող արձանագրություն. «Ս(ՈՒՐ)Ք Խ(Ա)ՉՍ ԲԱՐԷԽ[ԱԻ]Ս ՆՈՎԱՂԻՆ, ԿՈՂԱԿ[Ի]Ց ԱՊԱՍ[ԻՆ]։ ԹՎ ՌԿԹ (1620)» (գծ. 18)։

19. Խաչքար, ոմն Մխիթար Մարգարյանի գերեզմանի մոտ, երկաթե ցանկապատի մեջ։ Հողմնահարված է և սեացած։ Եղրագոտու վրա փորագրված արձանագրությունից կարդացվում են ԿԱ[Ն]Դ[Ն]ԵՑԻ Խ[Ա]Չ[Ս] բառերը։

20. Խաչքար, գտնվում է Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանոցում։ Ս. Դ. Բարխուդարյանի այցելության ժամանակ գտնված է եղել ոմն Գասպարյանի տան պատին։ Երևացել է միայն թիկունքը[10], ուստի չի նկատվել քարի արեմտահայաց երեսին, վարդյակի տակ, բուսական զարդերի հետ միահյուսված սարեթիվը՝ «ԹՎ ՌՃԽԷ (1698)» (գրչանկարը յուսանկարի անորակ լինելու պատճառով չենք ներկայացնում)։

21. Տապանաքար նույն գերեզմանոցում (եղել է Թագուհի Սահակյանի տան բակում)։ Օրորոցաձև է, կենցաղային տեսարաններով ու խաչապատկերներով։ Հրատարակության մեջ բաց են թողնվել .Տ(Է,Ր բառը (այն կա գրչանկարում)[11] և տարեթվի միավորը։ Այս մասնակի ջրացումներից հետո արձանագրությունը կարդացվում է հետևյալ կերպ. «Ս(ՈՒՐ)Ք ԽԱՉՍ ՊԱՐԷԽԱԻ[Ս] ՊԱՊԱՄԻՆ, ՈՐԴԻ Տ(Է,Ր ՄԷԼԻՔՍ[Է]ԹԻ[Ն], Թ[Ո]ՌՆ ԱՏԻՃԱՆՆ։ ԹՎ ՌՃԿԲ (1713)» (գծ. 19)։

22. Ապրհամի խաչքար։ Կանգնեցվել է գյուղի հին գերեզմանոցում Հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության գիտաարտադրական արվեստանոցի աշխատակիցների կողմից



Նկ. 3

1981—1982 թթ. բարեկարգման աշխատանքների ժամանակ։ Հրատարակված տեքստում[12] բացակայում է միայն տարեթիվը, որ փորագրված է մեծ խաչի թևի երկու կողմերում՝ «ԹՎ ՌԻԹ (1576)» (գծ. 20)։

23. Խաչքար նույն գերեզմանոցում։ Բարեկարգման աշխատանքների ժամանակ կանգնեցվել է անմշակ պատվանդանին։ Արձանագրության հրատարակության մեջ «ամիրա» տերմինը պատահականորեն դարձել է Սհակ (անձնանուն)[13], բաց են թողնվել ՀԱ(ՄԱՋԱՍՊ)Ս կամ գուցե ՀԱ(ԿՈԲ)Ս անձնանունը և մեծ խաչի ստորին թևից ձախ փորագրված ՁՈՐԴՈՅ է բառակապակցությունը, որ, սակայն, կա գրչանկարում (գծ. 21)։

24. Տապանաքար Ճանիպէկի, նույն գերեզմանոցում։ Ավելացնում ենք հյուսիսային կողին փորագրված տարեթիվը, որ պակասում է հրատարակության մեջ[14]. «ԹՎ ՌՃԽԱ (1692)» (գծ. 22, նկ. 3)։

Հ. Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

---

10 ԴՀՎ, IV, էջ 341, արձ. 1380։

11 Նույն տեղում, էջ 342, արձ. 1382։

12 Նույն տեղում, IV, էջ 337, արձ. 1368։

13 Նույն տեղում, էջ 336, արձ. 1367։

14 Նույն տեղում, էջ 337, արձ. 1370։